ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «18» մարտի 2025թ № 1146-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի N 2405-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման հավելվածի 41.1-ին կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 29-ի ««ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված

արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման մարմին նշանակելու մասին» N 2405-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի 5-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Սույն հրամանի նկատմամբ կատարման հսկողությունը վերապահել համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:».

2) Հավելվածի Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերի ցանկի 17-րդ կետում «(ԵԱՏՄ ՏԿ 047/2018)» բառերից հետո լրացնել «(գործելու է ուժի մեջ մտնելուց հետո):» բառերը.

3) Հավելվածի Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգերի ցանկը լրացնել նոր՝ 4-րդ կետով. «4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 954-Ն որոշում:»:

2025-05-21 00:21:32 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ